

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

ԸԿԵԻՊ բաժինը 2020 թվական առաջին կիսամյակի ընթացքում իրականացրել է աշխատանք <<ՆՈՐԲ>> տեղեկատվական բազայի հետ՝ մուտքագրվել է կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների 18 գործ, կատարվել է 4 երեխայի կարիքի գնահատում և տվյալների ներմուծում համակարգ, կազմվել է 3 ներառական կրթություն ստացող երեխայի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Կատարվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 280 երեխայի վերաբերյալ համակարգ մուտքագրված սոցիալ-հոգեբանական անհատական ծրագրերի վերախմբագրում նոր պահանջներին համապատասխան, որը թույլ է տալիս ստանալ ավելի ճշգրիտ և համապարփակ տեղեկատվություն երեխաների մասին: Կիսամյակում կենտրոնացված հաշվառման է վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 15 երեխա Ջերմուկ և Մալիշկա համայնքներից:

Այս պահին շուրջօրյա խնամքի հաստատությունում է գտնվում մարզի 9 երեխա, կենսաբանական ընտանիք է վերադարձել 1 երեխա, հատուկ կարիքներ ունեցող երեխաների դպրոցում է սովորում 1 երեխա /խույ ու համրերի դպրոց/: Մարզի 10 դպրոցներում կրթություն է ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 168 երեխա: Առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տարածքային բաժինների անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման խմբերում հաշվառման է վերցվել բռնություն գործադրած 11 անձ և 13 իրավախախտ անչափահաս: Համապատասխան մարմինների և խոցելի ընտանիքների հետ տարվել է համագործակցված աշխատանք՝ ընտանիքներում հաշտությունը վերականգնելու և անչափահասների կողմից կրկնահանցագործությունը բացառելու ուղղությամբ: Բաժնի մասնագետը ՀՀ Քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում մասնակցել է անչափահասի հետ տարվող քննչական գործողությունների: Բաժինը մասնակցել է Վայք համայնքում խնամակալության և հոգաբարձության մարմնի արտահերթ նիստի, որտեղ քննարկվել է առողջական խնդիր ունեցող միայնակ մոր բժշկական հետազոտության և նրա անչափահաս երեխաների հետագա խնամքի կազմակերպման հարցը: Ջերմուկ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի հրավերով ԸԿԵԻՊ բաժինը մասնակցել է աջակցող ցանցի նիստի՝ Ջերմուկ համայնքի 4 խոցելի ընտանիքների անհատական սոցիալական ծրագրերը և ընտանիքների հետ տարվող հետագա աշխատանքները քննարկելու համար: Բաժնի օգնությամբ մարզի Վայք և Գլաձոր համայնքների 3 երեխա ձեռք է բերել ծննդյան վկայական: Համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, ոստիկանության տարածքային բաժինների, սոցիալական կառույցների, համայնքային սոցիալական աշխատողների միջև գործող համագործակցության շնորհիվ շատ կոնֆլիկտային ընտանիքներում որոշակիորեն լուծվում են ընտանեկան խնդիրները, կանխվում են նոր ընտանեկան հակասությունները:

Սերտ է բաժնի համագործակցությունը երեխաների հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների և բարեգործական հիմնադրամների հետ:

Բաժնի աջակցությամբ << Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամը մարզում իրականացրել է սոցիալական աջակցության 2 ծրագիր, որի շրջանակում 550 կարիքավոր ընտանիքի տրամադրվել է սնունդ և հիգիենայի պարագաներ: Բաժինն աջակցել է <<Առաքելություն Հայաստան >> բարեգործական հիմնադրամին՝ մարզում 70 ընտանիքի աջակցություն տրամադրելու գործում:

Մանկական զարգացման հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում Վայք և Ջերմուկ քաղաքներում ստեղծվել են երեխաների աջակցության կենտրոններ, որտեղ սոցիալ-հոգեբանական աջակցություն են ստանում կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաները: Մարզի սոցիալապես անապահով 8 ընտանիքի 20 երեխա հիմնադրամի կողմից ստանում է ամենամսյա ֆինանսական օգնություն, սնունդ, հագուստ և գրենական պիտույքներ: Ծրագիրը գործելու է մինչև տարեվերջ:

Բաժնի աջակցությամբ սկսվել և ընթացքի մեջ են << Հայկական կարմիր խաչի ընկերության >> կողմից << Համայնքային ինտեգրված տնային խնամք և առողջ ծերացում>> ծրագրի ներդրման աշխատանքները, ակնկալվում է 20 աշխատատեղի ստեղծում:

ԸԿԵԻՊ բաժինը մարզի Հորս, Հեր-հեր, Մարտիրոս և Գետափ բնակավայրերի 4 ընտանիքի առանձնատների կառուցապատման համար դիմել է <<Ֆուլեր>> տնաշինական կազմակերպությանը: Տարվում է նախնական ուսումնասիրման աշխատանքներ՝ ընտանիքները բնակարանաշինության ծրագրում ընդգրկելու համար: Եղեգնաձոր համայնքի բազմազավակ ընտանիքին տաք հագուստ և կոշիկ է նվիրել <<Իմ քայլը >> բարեգործական հիմնադրամը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հիմնադրամի հետ՝ բազմազավակ, ինչպես նաև Արտաբույք բնակավայրի սոցիալապես անապահով ուսուցչուհու ընտանիքին ցուցաբերել ֆինանսական աջակցություն՝ առանձնատուն ձեռք բերելու համար:

Պատրաստվել է առաջարկություններ՝ Ջերմուկ համայնքի հիմնախնդիրների, «Սոցիալական պաշտպանության զարգացման 2020-2030 թթ.. ռազմավարության և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 5-ի N 492-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ:

Բաժնի համապատասխան մասնագետը մասնակցել է Եղեգնաձոր համայնքի իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին՝ ոլորտի մասով:

Բաժնի երկու ավագ մասնագետ փետրվար ամսին մասնակցել են << Նորք >> տեղեկատվական համակարգի բարեփոխումների շրջանակում իրականացվող վերապատրաստման եռօրյա դասընթացին:

ԸԿԵԻՊ բաժնի պետ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

09/07/2020թ.